Հավելված 7
«ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/07»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-2

ք.Բերդ «16» ապրիլի 2019 թ.

«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ Համայակ Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ասատուր Ասատրյանի , որը գործում է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ուշացած նաև ապրանքը այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **2866202.47(երկու միլիոն ութ հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր երկու ամբողջ քառասունյոթ հարյուրերրորդական)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

մատակարարման ամբողջ, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.5 Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[4]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[5]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան

---

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[5] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

համաձայնագիր կնքման դիտորդում: Համաձայնագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[6]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25	ք. Երևան, Տիչինայի 3 նրբ., 2/2
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ	Բանկ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2477800186580010	Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 07806692	ՀՎՀՀ 01222567
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել օրենսդրությանը հակասող դրույթներ:

---

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« 16 » ապրիլի 2019 թ. կնքված
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
2	33691191	Էսենցիալ ֆոսֆոլիպիդներ - Էսֆոլ – Ն սրվ.250մգ/5մլ N5	Լիկվոր ՓԲԸ, Հայաստան	Էսենցիալ ֆոսֆոլիպիդներ (essential phospholipids) լուծույթ ն/ե ներարկման 50մգ/մլ, 5մլ ապակե սրվակներ(5)	հատ	600.91	300455	500	Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25	500	2019թ-ի ընթացքում՝ յուրաքանչյուր անգամ պատվիրատուից պատվեր ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:
3	33691214	Ռանիտիդին թ/պ դ/ի 150մգ N30	Հեմոֆարմ Ա.Դ Սերբիա	ռանիտիդին (ռանիտիդինի հիդրոքլորիդ) ranitidine (ranitidine hydrochloride)դեղահատեր թաղանթապատ150մգ, բլիստերում (30/3x10/)	դեղահատ	13.5	9450	700		700	
5	33611390	Պիրիդոքսին ամպ. 5% 1 մլ N10	Երևանի Քիմիադեղագործական Ֆիրմա ԲԲԸ Հայաստան	Պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ) pyridoxine (pyridoxine hydrochlori լուծույթ ե/մ, մ/մ և ն/ե ներարկման 50մգ/մլ,1մլ ամպուլներ (10)	սրվակ	16.51	6604	400		400	
7	33661125	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ լուծույթ - Սպազմալգոն ամպ 2մլ N10	Սոֆարմա ԲԸ Բուլղարիա	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ լուծույթ, մ/մ ներարկման 500մգ/մլ + 2մգ/մլ + 0.02մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10/1x10/)	սրվակ	171	20520	120		120	

8	33661125	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ լուծույթ - Սպազմալգոն 5մլ կամ համարժեք	Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ Բելառուս	մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ ուծույթ, մ/մ ներարկման 500մգ/մլ + 2մգ/մլ + 0.02մգ/մլ, 5մլ ամպուլներ, բլիստերում 10/1x10/)	սրվակ	145	20300	140		140	
10	33691213	Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ- Լինեքս դ/պ N16	Լեկ Ֆարմասյութիքալս դ.դ. Սլովենիա	լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ դեղապատիճներ, կոշտ 1,2x10^7, ապակե տարայում (16), բլիստերում (16/2x8/)	դեղապատիճ	49.2	24600	500		500	
11	33611130	Ատրոպինի սուլֆատ ամպմ/մ ն/ե 0.1 % 1 մլ N10	Դեղագործական ընկերություն «Զդորովյե» ՍՊԸ ՈՒկրաինա	Ատրոպին (ատրոպինի սուլֆատ) atropine (atropine sulfate) լուծույթմ/մ,ն/ե և ե/մ ներարկման 1մգ/մլ, 1մլ ամպուլներ(10)	սրվակ	53.56	5356	100		100	
16	33621360	Գլիցերին մոմիկ 2,11գ N 10	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ	գլիցերոլ (glycerol) մոմիկներ, ուղիղաղիքային 2.11գ, (10/2x5/), Հայաստան	հատ	89.39	28604.8	320		320	
17	33661127	Մետամիզոլ (մետամիզոլի նատրիում)լուծույթ - Անալգին ամպ 50% 2մլ N 10	Երևանի Քիմիադեղագործական Ֆիրմա ԲԲԸ Հայաստան	մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) լուծույթ, մ/մ և ն/ե ներարկման 500մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)	սրվակ	30.59	94829	3100		3100	
18	33691129	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ - Ռեհիդրոն դ/փոշի փաթ.18.9գ N 1	Օրիոն Քորփորեյշն Ֆինլանդիա	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ sodium chloride, potassium chloride, sodium citrate, glucose anhydrous դեղափոշի դեղաչափված 3,5մգ+2,5մգ+2,9մգ+ 10մգ, 18,9գ	հատ	227	118040	520		520	

20	33611341	Վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ լուծույթ - Վիտամին B համալիր լուծույթ ներարկման համար ամպ.2մլ N 10	Սոֆարմա ԲԸ Բուլղարիա	վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ լուծույթ, ներարկման 5մգ/մլ + 2մգ/մլ + 2մգ/մլ + 3մգ/մլ + 20մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10/2x5/)	սրվակ	146	61320	420		420
21	33611350	Ասկորբինաթթու ամպ.5% 5մլ /վիտամին Ց / N 10	Երևանի Քիմիադեղագործական Ֆիրմա ԲԲԸ Հայաստան	Ասկորբինաթթու, ascorbic acid լուծույթ ներարկման 50մգ/մլ, 5մլ	սրվակ	48.95	97900	2000		2000
22	33621150	Ֆիտոմենադիոն (phytomenadione) լուծույթ - Կոնակիոն ամպ.2մգ/0.2մլ + ներարկիչ կամ համարժեք N 5	Սենեքսի ՍԱՍ Ֆրանսիա	ֆիտոմենադիոն (phytomenadione) լուծույթ ներարկման/ներքին ընդունման2մգ/0,2մլ, 0,2մլ ամպուլներ (5) և դեղաչափիչ սարք	սրվակ	1265.6	189840	150		150
26	33691218	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ - Պանանգին ամպ 10մլ N 5	Գեդեոն Ռիխտեր ԲԲԸ Հունգարիա	մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ խտանյութ, կաթիլաներարկման լուծույթի 400մգ/10մլ + 452մգ/10մլ, 10մլ ամպուլներ, բլիստերում (5/1x5/)	սրվակ	309.92	30992	100		100
27	33611420	Կալցիումի գլյուկոնատ ամպ.10% 10մլ N 10	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ ՈՒկրաինա	Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate լուծույթ ներարկման 100մգ/մլ, 10մլ	սրվակ	139	36140	260		260
28	33611420	Կալցիումի գլյուկոնատ 10% 5մլ N 10	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ ՈՒկրաինա	Կալցիումի գլյուկոնատ, Calcium gluconate լուծույթ ներարկման 100մգ/մլ, 5մլ	սրվակ	78	5460	70		70
29	33691176	Բիսակոդիլ մոմիկ 10մգ N 10	Լեկխիմ-Խարկով ԲԸ ՈՒկրաինա	բիսակոդիլ (bisacodyl) մոմիկներ, ուղիղաղիքային 10մգ (10/2x5 /)	հատ	49.6	11408	230		230
31	33691176	թեոֆիլին 350մգ - Թեոտարդ դ/պ 350մգ N 40	ԿՌԿԱ Սլովենիա	թեոֆիլին դեղապատիճներ, կարգավորվող ձերբազատմամբ 350 մգ	դեղապատիճ	49.95	17982	360		360

32	33691176	Մագնեզիումի լակտատի դիհիդրատ, պիրիդոքսինի հիդրոքլորիդ - Մագնե B6 թ/պ դ/հ N 50	Սանոֆի Ռիինթրոպ Ֆրանսիա	մագնեզիումի լակտատի դիհիդրատ, պիրիդոքսինի հիդրոքլորիդ դեղահատեր թաղանթապատ 470մգ + 5մգ	դեղահատ	53.4	10680	200		200	
34	33691216	Էթիլմեթիլհիդրոքսիպիրիդին սուկցինատ - Մեքսիպրիմ ամպ. 50մգ/մլ 2մլ N 10	ԴՊՈՒՀ Մոսկվայի Էնդոկրին Գործարան Ռուսաստան	էթիլմեթիլհիդրոքսիպիրիդին ի սուկցինատ ethylmethylhydroxypiridine succinate լուծույթ ն/ե և մ/մ ներարկման 50մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10/2x5/)	սրվակ	190	57000	300		300	
36	33691500	Տրանեքսամաթթու - Տրանեքսամ ն/ե 50մգ/մլ 5մլ N 10	«Մոսկվայի էնդոկրինային գործարան ՖՊՈՒՁ» Ռուսաստան	տրանեքսամաթթու (tranexamic acid) լուծույթ ն/ե կաթիլաներարկման 50 մգ/մլ, 5 մլ ամպուլներ (10/2x5/)	սրվակ	1667.2	333440	200		200	
37	33691500	Տրանեքսամաթթու 500մգ N 10 Տրանեկսամ	Օբնինսկի Քիմիադեղագործական Ընկերություն ՓԲԸ Ռուսաստան	տրանեքսամաթթու դեղահատեր, թաղանթապատ 500մգ	դեղահատ	368.96	73792	200		200	
40	33621210	Երկաթի (III) հիդրոքսիդի և պոլիմալտոզի համալիր - Ֆերում Լեկ 100մգ /2մլ N 50	Լեկ դ.դ. Սլովենիա	Երկաթի (III) հիդրոքսիդի և պոլիմալտոզի համալիր iron (III) hydroxide with polymaltose complex լուծույթ մ/մ ներարկման 50մգ/2մլ, 2մլ ամպուլներ (50)	սրվակ	550	55000	100		100	
44	33621390	Ամիոդարոն - Կորդարոն 200մգ N 30	Խինոին Դեղագործական և Քիմիական Գործարան Փրայվիտ Քո. ՍՊԸ Հունգարիա	Ամիոդարոն amiodarone դեղահատեր, բաժանելի 200մգ, բլիստերում (30/3x10/)	դեղահատ	65	13000	200		200	
45	33621390	Ամիոդարոն ամպ 5% 3մլ կամ համարժեք N 10	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» Բելոռուս	ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ) լուծույթ, ներարկման 50մգ/մլ, 3մլ ամպուլներ (6)	սրվակ	262.12	52424	200		200	
47	33671114	Ամինոֆիլին - էուֆիլին 2.4 % 5մլ N 10	Երևանի Քիմիադեղագործական Ֆիրմա ԲԲԸ Հայաստան	Ամինոֆիլին, Aminophylline լուծույթ ներարկման 24մգ/մլ, 5մլ	սրվակ	36.71	23861.5	650		650	

48	33621330	Նիկեթամիդ - Կորդիամին ամպ. 25% 2մլ N 10	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ ՈՒկրաինա	Նիկեթամիդ nikethamide լուծույթ ներարկման 250մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10, 10/2x5/)	սրվակ	118	11800	100	100
49	33621270	Լևոմենթոլի լուծույթ մեթիլիզովալերիատում - Վալիդոլ 60մգ կամ համարժեք N 10	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ ՈՒկրաինա	Լևոմենթոլի լուծույթ մեթիլիզովալերիատում levomenthol solution in methyl isovaleriate դեղահատ ենթալեզվային 60 մգ, բլիստերում (10)	դեղահատ	8.66	2511.4	290	290
51	33661117	Կատվախոտի հանուկ Վալերիանա կամ համարժեք N 50	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ Բելոռուս	Կատվախոտի հանուկ valerian extract դեղահատ 20մգ	դեղահատ	1.78	3560	2000	2000
53	33621290	Էպինեֆրին (ադրենալին) 0.18% 1.0 N 10 Ադրենալին - Զդորովյե	Զդորովյե Դեղագործական Ընկերություն ՍՊԸ ՈՒկրաինա	Էպինեֆրին (էպինեֆրինի հիդրոտարտրատ) epinephrine (epinephrine hydrotartrate) լուծույթ ներարկման 1,82մգ/մլ, 1մլ ամպուլ	սրվակ	130	15600	120	120
54	33621360	Նիտրոգլիցերին դ/h 0.5մգ N 40	Տեխնոլոգ ՄԲԸ ՈՒկրաինա	Նիտրոգլիցերին (nitroglycerine) դեղահատ ենթալեզվային 0.5 մգ	դեղահատ	7.78	5057	650	650
55	33621360	Նիտրոգլիցերին լուծույթ սրվ. 10 մգ/մլ 2մլ N 10	Դեղագործական ընկերություն «Զդորովյե» ՍՊԸ ՈՒկրաինա	Նիտրոգլիցերին nitroglycerin խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 5մգ/մլ, 2մլ ամպուլ	սրվակ	632	37920	60	60
59	33661147	Նեոստիգմին - Պրոզերին 0.05% 1մլ N 10	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ ՈՒկրաինա	Նեոստիգմին neostigmine լուծույթ ներարկման 0,5մգ/մլ, 1մլ	սրվակ	42	2940	70	70
60	33621440	Բենդազոլ - Դիբազոլ 1% 1մլ N 10	Երևանի Քիմիադեղագործական Ֆիրմա ԲԲԸ Հայաստան	Բենդազոլ bendazol լուծույթ մ/մ ներարկման 10մգ/մլ, 1մլ	սրվակ	24.47	55057.5	2250	2250
62	33621542	Պապավերին մոմիկ 0.02գ N 10	Նիժֆարմ ԲԸ Ռուսաստան	Պապավերին papaverine մոմիկներ ուղիղաղիքային 20մգ	մոմիկ	58.4	8760	150	150
63	33621590	Ֆուրոսեմիդ 1% 2մլ N 10	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ Բելոռուս	Ֆուրոսեմիդ furosemide,լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 2մլ	սրվակ	27.77	33324	1200	1200
65	33621620	Սպիրոնոլակտոն - Սպիրոլոն 25 մգ N 50	Ռեմեդիկա ՍՊԸ Կիպրոս	Սպիրոնոլակտոն, Spironolactone, դեղահատ 25 մգ	դեղահատ	35	245000	7000	7000

67	33621750	Նիֆեդիպին դրաժե 10մգ N 50	Տեխնոլոգ ՓԲԸ ՈՒկրաինա	Նիֆեդիպին Nifedipine դեղահատ 10 մգ	դեղահատ	13.89	69450	5000	5000
73	33691728	Կեչու խեժ, քսերոֆորմ - Բալասանային նրբամածուկ ըստ Վիշնևսկու 40մգ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ Բելոռուս	Կեչու խեժ, քսերոֆորմ birch tar, xeroform նրբամածուկ 30մգ/գ+30մգ/գ 40մգ ալյումինե պարկուճ	պարկուճ	315.49	7256.27	23	23
77	33631310	Դիկլոֆենակ 25մգ/մլ 3մլ N 5	Լեկխիմ-Խարկով ԲԸ ՈՒկրաինա	Դիկլոֆենակ diclofenac լուծույթ ներարկման 25 մգ/մլ, 3մլ	սրվակ	78.4	70560	900	900
78	33632100	Դիկլոֆենակ - Դիկլակ դոնդող 5% 50գ	Սալուտաս Ֆարմա ԳմբՀ, Գերմանիա	Դիկլոֆենակ diclofenac դոնդող արտաքին կիրառման 50մգ/գ ալյումինե պարկուճ	հատ	954	9540	10	10
80	33641310	Դիդրոգեստերոն - Դյուֆաստոն թ/պ դ/հ 10մգ N 20	ԱԲԲOSS Բիոլոջիկալս Բ.Վ. Նիդերլանդներ	Դիդրոգեստերոն Dydrogesterone դեղահատ 10 մգ	դեղահատ	217	43400	200	200
81	33641200	Միզոպրոստոլ - Սայտոտեք դ/հ 200մկգ	Պիրամալ Հելթքեյր ՄԹ Լիմիտեդ Մեծ Բրիտանիա	Միզոպրոստոլ misoprostol դեղահատ 200մկգ	դեղահատ	189	105840	560	560
82	33661153	Դեքսամեթազոն 4 մգ/մլ 1մլ N 5	Լեկխիմ-Խարկով ԲԸ ՈՒկրաինա	Դեքսամեթազոն dexamethasone լուծույթ ներարկման 4մգ/մլ, 1մլ	սրվակ	51	67830	1330	1330
84	33691236	Քլորոպիրամին - Սուպրաստիլին դ/հ 25մգ N20	Լեկխիմ-Խարկով ԲԸ ՈՒկրաինա	Քլորոպիրամին chloropyramine 25մգ, բլիստերում (20/2x10/), ապակե տարայում (20)	դեղահատ	41.68	4168	100	100
85	33642210	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ - Մեդրոլ դ/հ 4 մգ N 30	Պֆայզեր Իտալիա Ս.Ռ.Լ. Իտալիա	Մեթիլպրեդնիզոլոն methylprednisolone դեղահատ 4մգ	դեղահատ	48	4800	100	100
86	33651144	Նիտրոքսոլին թ/պ դ/հ 50մգ N 50	Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԸ Ռուսաստան	Նիտրոքսոլին 50մգ, դեղահատեր թաղանթապատ	դեղահատ	6.08	3040	500	500
87	33651111	Ամոքսիցիլին օշարակ 250մգ/5մլ 100 մլ	Հեմոֆարմ Սերբիա	Ամոքսիցիլին amoxicillin դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, 250մգ/5մլ 100մլ ապակե սրվակում և չափիչ գդալ 5մլ	շշիկ	775	147250	190	190
88	33651116	Ցեֆազոլին ն/ե և մ/մ սրվ. 1գ	«Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան» ԲԲԸ Բելոռուս	Ցեֆազոլին cefazolin, դեղափոշի ներարկման լուծույթի, 1000մգ	սրվակ	174	139200	800	800

89	33651123	Ցեֆոտաքսիմ – Բիոտակսիմ ն/ե և մ/մ սրվ. 1գ	Բիոսինթեզ ԲԲԸ Ռուսաստան	Ցեֆոտաքսիմ cefotaxime դեղափոշի ներարկման լուծույթի, 1000մգ	սրվակ	336	67200	200		200	
95	33631360	Սուքսամեթոնիում (սուքսամեթոնիումի յոդիդ) – Դիթիլին N 10	Բելմեդպրեպրահ ՀՈՒՁ Բելոռուս	Սուքսամեթոնիում (սուքսամեթոնիումի յոդիդ) լուծույթ, ն/ե ներարկման 20մգ/մլ, 5մլ ամպուլներ (10) և կտրիչ, 5մլ ամպուլներ բլիստերում	հատ	307	6140	20		20	
		Ընդամենը					2866202.47				

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

***Եթե հրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:*

****Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ

«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ
Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477800186580010
ՀՎՀՀ 07806692

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ք. Երևան, Տիչինայի 3 նբ., 2/2
Բանկ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 16 » ապրիլի 2019 թ. կնքված
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	33691191	Էսենցիալ ֆոսֆոլիպիդներ - Էսենցիալե Հ 5մլ կամ համարժեք սրվ. 250մգ/5մլ 5մլ												300455	300455
3	33691214	Ռանիտիդին թ/պ 150մգ												9450	9450
5	33611390	Պիրիդոքսին ամպ. 5% 1 մլ /Վիտամին Բ 6/												6604	6604
7	33661125	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ լուծույթ -Սպազմալգոն 2մլ կամ համարժեք												20520	20520
8	33661125	Մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), պիտոֆենոն (պիտոֆենոնի հիդրոքլորիդ), ֆենպիվերինիում բրոմիդ լուծույթ -Սպազմալգոն 5մլ կամ համարժեք												20300	20300
10	33691213	Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ Լինեքս կամ համարժեք												24600	24600
11	33611130	Ատրոպին 0.1 % 1 մլ												5356	5356
16	33621360	Գլիցերին մոմիկ 2,11 գ												28604.8	28604.8
17	33661127	Մետամիզոլ (մետամիզոլի նատրիում) լուծույթ - Անալգին 50% 2մլ կամ համարժեք												94829	94829

18	33691129	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ - Ռեհիդրոն դ/փոշի փաթ.18.9գ կամ համարժեք													118040	118040
20	33611341	Վիտամին B1,վիտամին B2, վիտամին B6, դեքսպանթենոլ, նիկոտինամիդ լուծույթ - Վիտամին Բ կոմպլեկս ամպ.2մլ													61320	61320
21	33611350	Ասկորբինաթթու ամպ.5% 5մլ /վիտամին Ց /													97900	97900
22	33621150	Ֆիտոմենադիոն (phytomenadione) լուծույթ - Կոնակիոն ամպ.2մգ/0.2մլ + ներարկիչ կամ համարժեք													189840	189840
26	33691218	Մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիումի ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ - Պանանգին 10մլ կամ համարժեք													30992	30992
27	33611420	Կալցիումի գլյուկոնատ ամպ.10% 10մլ													36140	36140
28	33611420	Կալցիումի գլյուկոնատ 10% 5մլ													5460	5460
29	33691176	Բիսակոդիլ մոմիկ 10մգ													11408	11408
31	33691176	թեոֆիլին 350մգ - Տեոտարդ 350մգ կամ համարժեք													17982	17982
32	33691176	Մագնեզիումի լակտատի դիհիդրատ, պիրիդոքսինի հիդրոքլորիդ - Մագնե B6 կամ համարժեք													10680	10680
34	33691216	Էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ - Մեքսիդոլ համարժեք Մեքսիպրիմ ամպ. 50մգ/մլ 2մլ կամ համարժեք													57000	57000
36	33691500	Տրանեքսամաթթու - Տրանեքսամ ն/ե 50մգ/մլ 5մլ կամ համարժեք													333440	333440
37	33691500	Տրանեքսամաթթու 500մգ													73792	73792
40	33621210	Երկաթի (III) հիդրոքսիդի և պոլիմալտոզի համալիր - Ֆերում Լեկ 100մգ /2մլ կամ համարժեք													55000	55000
44	33621390	Ամիոդարոն - Կորդարոն 200մգ կամ համարժեք													13000	13000
45	33621390	Ամիոդարոն - Կորդարոն 150մգ-3մլ կամ համարժեք													52424	52424
47	33671114	Ամինոֆիլին - Էուֆիլին 2.4 % 5մլ կամ համարժեք													23861.5	23861.5

48	33621330	Նիկեթամիդ - Կորդիամին ամպ. 25% 2մլ կամ համարժեք												11800	11800
49	33621270	Լևոմենթոլի լուծույթ մեթիլիզովալերիատում - Վալիդոլ 60մգ կամ համարժեք												2511.4	2511.4
51	33661117	Կատվախոտի հանուկ Վալերիանա կամ համարժեք												3560	3560
53	33621290	Էպինեֆրին (ադրենալին) 0.18% 1.0												15600	15600
54	33621360	Նիտրոգլիցերին 0.5մգ												5057	5057
55	33621360	Նիտրոգլիցերին 5 մգ/մլ 2մլ												37920	37920
59	33661147	Նեոստիգմին - Պրոզերին 0.05% 1մլ կամ համարժեք												2940	2940
60	33621440	Բենզազոլ - Դիբազոլ 1% 1մլ կամ համարժեք												55057.5	55057.5
62	33621542	Պապավերին մոմիկ 0.02գ												8760	8760
63	33621590	Ֆուրոսեմիդ 1% 2մլ												33324	33324
65	33621620	Սպիրոնոլակտոն - Վերոշպիրոն 25 մգ կամ համարժեք												245000	245000
67	33621750	Նիֆեդիպին 10մգ												69450	69450
73	33691728	Կեչու խեժ, քսերոֆորմ - Բալասանային նրբամածուկ ըստ Վիշնևսկու 40մգ կամ համարժեք												7256.27	7256.27
77	33631310	Դիկլոֆենակ 75 մգ/3 մլ 3մլ												70560	70560
78	33632100	Դիկլոֆենակ - Դիկլակ գել 5% 50գ կամ համարժեք												9540	9540
80	33641310	Դիդրոգեստերոն -Դյուֆաստոն 10մգ կամ համարժեք												43400	43400
81	33641200	Միզոպրոստոլ - Սայտոտեք 200մկգ կամ համարժեք												105840	105840
82	33661153	Դեքսամեթազոն 4 մգ/մլ 1մլ												67830	67830
84	33691236	Քլորոպիրամին - Սուպրաստին 25մգ կամ համարժեք												4168	4168
85	33642210	Մեթիլպրեդնիզոլոն 4մգ - Մեդրոլ դ/հ 4 մգ կամ համարժեք												4800	4800
86	33651144	Նիտրոքսոլին - 5 - Նոկ 50մգ կամ համարժեք												3040	3040
87	33651111	Ամոքսիցիլին օշարակ 250մգ/5մլ 100 մլ												147250	147250
88	33651116	Ցեֆազոլին ն/ե և մ/մ սրվ.1գ												139200	139200
89	33651123	Ցեֆոտաքսիմ – Կլաֆորան 1 գ համարժեք Բիոտակսիմ ն/ե և մ/մ սրվ. 1գ կամ համարժեք												67200	67200

95	33631360	Սուքսամեթոնիում (սուքսամեթոնիումի յոդիդ) – Դիթիլին կամ համարժեք												6140	6140

* Ապրանքի դիմաց վճարումները կկատարվեն ըստ պահանջված դեղորայքի մատակարարման՝ 10աշխատանքային օրվա ընթացքում :

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ԳՆՈՐԴ

«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ
Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477800186580010
ՀՎՀՀ 07806692

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
ք. Երևան, Տիչինայի 3 նրբ., 2/2
Բանկ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 16 » ապրիլի 2019 թ. կնքված
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու
«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ
գտնվելու վայրը Տավուշի մարզ,
ք.Բերդ, Ա. Մանուկյան,25
հհ 2477800186580010
հվհհ 07806692

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «16» «ապրիլի» 2019 թ.
Պայմանագրի համարը՝ ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-2
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2019 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 16 » ապրիլի 2019 թ. կնքված
ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/07-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 2019 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 2019 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն